«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19,

28/12/2021թ.

«Հայաստան» համահայկական հիմնադրամի

գործադիր տնօրեն Հայկակ Արշամյանին

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 26/1

Հարգելի պարոն Արշամյան,

Ձեզ է ուղարկվում «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հավաքագրված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված միջոցների օգտագործումը ուսումնասիրող Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի որոշումը, որով Դուք հրավիրվում եք Հանձնաժողովի 11.01.2022թ ժամը 15:00-ի նախատեսված նիստին՝ Հանձնաժողովի՝ 30.11.2021թ որոշմամբ ուղարկված տեղեկություններ տրամադրելու պահանջի վերաբերյալ «Հայաստան» համահայկական հիմնադրամի ներկայացրած պատասխանի 1-6 և 8-10-րդ կետերով տրամադրված տեղեկության ամբողջականացման, ինչպես նաև հանձնաժողովի ուսումնասիրության առարկայի վերաբերյալ այլ տեղեկություններ տրամադրելու նպատակով:

Ակնկալվում է, որ նիստը կտևի շուրջ իննսուն րոպե: Նիստի ժամկետի հնարավոր փոփոխության վերաբերյալ առաջարկությունը կարող ենք քննարկել աշխատանքային կարգով՝ մինչև 2022թ. հունվարի 7-ը:

Սույն հրավերին կցվում է.

- Հանձնաժողովի որոշումը:

Հարգանքով՝

հանձնաժողովի նախագահ՝ **Արծվիկ Մինասյան**

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27.12.2021թ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՀԱՅԿԱԿ ԱՐՇԱՄՅԱՆԻՆ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հավաքագրված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված միջոցների օգտագործումը ուսումնասիրող Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

Հանձնաժողովի՝ 30.11.2021թ որոշմամբ ուղարկված տեղեկություններ տրամադրելու պահանջի վերաբերյալ «Հայաստան» համահայկական հիմնադրամի ներկայացրած պատասխանի 1-6 և 8-10-րդ կետերով տրամադրված տեղեկության ամբողջականացման, ինչպես նաև հանձնաժողովի ուսումնասիրության առարկայի վերաբերյալ այլ տեղեկություններ ներկայացնելու նպատակով քննիչ հանձնաժողովի 11.01.2022թ ժամը 15:00-ի նիստին հրավիրել «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Հայկակ Արշամյանին:

Քննիչ հանձնաժողովի նախագահ՝ **Արծվիկ Մինասյան**